ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՅԺԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 71 - 72 (17078) ՇԱԲԱԹ 10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՈՐԴԵԳՐԵՅԻՆՔ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ»

Սեպտեմբերի 6-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Բրյուսելում մասնակցեց Վրաստան-Եվրամիություն ասոցացման խորհրդի 7-րդ նիստին:

Վարչապետի գնահատմամբ, խորհրդի ներկայիս նիստը շատ կարեւոր իրադարձություն է այնքանով, որ Եվրահանձնաժողովի կողմից Վրաստանին եվրոպական հեռանկար տրամադրելու պատմական որոշումից հետո, առաջին անգամ կայացավ Վրաստան-Եվրամիություն նման ձեւաչափով հանդիպում:

Խորհրդի նիստին, Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորած պատվիրակության հետ միասին, մասնակցում էին Եվրամիության արտաքին քաղաքականության եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ջոզեֆ Բորելն ու Եվրամիության ընդլայնման հարցերով եվրահանձնակատար Օլիվեր Վարհեյը:

Նիստի ավարտին, կայացավ Վրաստանի վարչապետի եւ Եվրամիության բարձրագույն ներկայացուցիչների համատեղ մամլո ասուլիսը, որտեղ կողմերը ներկայացրեցին Վրաստան-Եվրամիություն ասոցացման խորհրդի 7-րդ նիստում քննարկված հարցերի օրակարգը, մասնավորապես, Վրաստանի՝ Եվրամիությանն անդամակցելու հեռանկարը, անվտանգության ու տնտեսական ոլորտներում համագործակցությունը, առանձնակի կանգ առան Վրաստանի կողմից Եվրահանձնաժողովի 12 հանձնարարականների կատարման հարցին:

- Այս ճանապարհը մեզ կտանի այնտեղ, որտեղ իրավամբ Վրաստանի տեղն է: Մենք ունենք ընդհանուր արժեքներ, ընդհանուր նպատակներ: Մենք աջակցում ենք խաղաղությանն ու համերաշխությանը: Մենք մեծ պատասխանատվությամբ ենք վերցրել եվրոպական հեռանկարը, մենք դա շատ լավ հասկանում ենք, որպեսզի ապահովենք ամենաբարձր քաղաքական ու տնտեսական համատեղելիությունը Եվրամիության հետ, այս պատ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

«ԳԼՈԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՖՈՆԻ ՎՐԱ ՄԵՆՔ ՊԱՀՊԱՆԵԼ ԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՂՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

Սեպտեմբերի 5-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ անցկացված երկրի կառավարության նիստին հանրագումարվեց տարվա անցած ժամանակահատվածում եվրաինտեգրման, եվրահանձնաժողովի հանձնարարականների կատարման, երկրի էկոնոմիկայում առկա դրական միտումների հաստատման ուղղությամբ կառավարության կողմից իրականացված միջոցառումների արդյունքները:

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ԱՆՆԱԽԱԴԵՊ ԵՐԿՆԻՇ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Կառավարության նիստում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ վիճակագրական ծառայությունը հանրագումարել է վերջին յոթ ամիսների տվյալները, ըստ որի, հաշվետու ժամանակահատվածում տնտեսական աճը կազմել է 10,3 տոկոս, ինչը, իսկապես անանախադեպ բարձր տնտեսական աճ է ամբողջ աշխարհում:

- Ակնհայտ է, որ Ուկրաինայի ֆոնին շատ մեծ մարտահրավերներ կան ոչ միայն Եվրոպայում, այդ խնդիրներն արդեն փոխանցվել են ամբողջ աշխարհին, եւ այս ֆոնին մեզ՝ մեր երկրին, հաջողվում է հասնել երկնիշ տնտեսական աճի, ինչը, իհարկե, շատ ողջունելի է: Ասեմ, այս մասին խոսել եմ կառավարության նախորդ նիստում, որ արտահանումը զգալի աճել է 40 տոկոսով, եւ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԸ ԼԱՇԱ ԴԱՐՍԱԼԻԱՅԻՆ ՀԱՆՁՆԵՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԻ ՊԱՏՃԵՆԸ

Երեկ՝ սեպտեմբերի 9-ին, Վրաստանում Հայաստանի նորանշանակ դեսպան Աշոտ Սմբատյանը հավատարմագրերի պատճենը հանձնեց Վրաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիային:

Լաշա Դարսալիան շնորհավորեց Աշոտ Սմբատյանին՝ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնի ստանձնման կապակցությամբ ու մաղթեց արդյունավետ գործունեություն:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանի եւ Վրաստանի միջեւ տարբեր ոլորտներում առկա բազմաշերտ համագործակցությանը: Զրուցակիցները պատրաստակամություն հայտնեցին սերտորեն աշխատել երկկողմ օրակարգի առաջմղման ուղղությամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՄՓՈՓՎԵՑ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 9-ին Վրաստանի Հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվլեդիանին ժողովրդական պաշտպանին կից Ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ հանդիպմանն ամփոփեց Քաղաքացիական հավասարության եւ ինտեգրման պետական ռազմավարության 2021 թվականի գործողությունների ծրագրի իրականացումը:

Թեա Ախվլեդիանին ամփոփեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության 2021 թվականի գործողությունների ծրագրի իրականացման վիճակը: Պետ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ 2022-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

 საქართველოს განათლებისა და მეცნიერების სამინისტრო

Վրաստանի կառավարության որոշմամբ, հաստատվել է կրթության եւ գիտության 2022-2030 թվականների միասնական ազգային ռազմավարությունն ու 2022-2024 թվականների նույն ռազմավարության գործողությունների ծրագիրը, որոնք Վրաստանի կրթության ու գիտության նախարար Միխեիլ Չխենկելին անձամբ ներկայացրեց կառավարության անդամներին:

Հարկ է նշել, որ 2022-2030 թվականների կրթության եւ գիտության ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը հիմնված են Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ կրթության ու գիտության նախարար Միխեիլ Չխենկելու 2021 թվականին ներկայացրած տասնամյա ծրագրի վրա: Փաստաթուղթը հաշվի է առնում կայուն զարգացման նպատակները եւ կնպաստի կրթական ընթացիկ բարեփոխումների շրջանակներում ձեռք բերված արդյունքների ամրապնդմանը:

Փաստաթղթում, հաշվի առնելով իրավիճակային վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրներն ու մարտահրավերները, սահմանվել են երեք հիմնական ոլորտային առաջնահերթ ուղղություններ.

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

«Վրացական երազանք» կառավարող կուսակցությանն արձագանքեց արմատական ընդդիմության հայտարարությանը, որտեղ բարձրացվել էր արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման հարցը:

- Արմատական ընդդիմության գործողություններն այնքան անիմաստ, ծամծմված ու կանխատեսելի են դարձել, որ արդեն դժվար է որեւէ մեկնաբանություն անել,- արձագանքելով ամատականների պահանջին՝ հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ **Շալվա Պապուաշվիլին:**

Նրա խոսքով, «նրանից հետո, երբ Եվրախորհուրդը թեկնածուի վերաբերյալ որոշում կայացրեց, եւ ապաբեւեռացումը գրվեց որպես առաջին հանձնարարական 12 հանձնարարականների շարքում, հաջորդ օրը՝ հունիսի 24-ին, տեղի ունեցավ բողոքի ցույց, որտեղ վերջնագիր ներկայացվեց խորհրդարանին»:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՈՐԴԵԳՐԵՅԻՆՔ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մական որոշումը մեզ բոլորովին նոր թիրախային կողմնորոշում է բերում, Վրաստանը դնում է բոլորովին նոր իրականություն,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ Եվրահանձնաժողովի կողմից 12 հանձնարարականի ներկայացումից հետո, Վրաստանը ներկայացրեց կոնկրետ գործողությունների ծրագիր, որտեղ յուրաքանչյուր գերակայության համար կոնկրետ ժամկետ է նշվում:

- Մենք սկսել ենք ներառական գործընթաց, որում ներգրավված են տարբեր քաղաքական խմբեր՝ընդդիմադիր կուսակցություններ, իշխանություն եւ քաղաքացիական հասարակություն, թեեւ պետք է նշեմ, որ, ցավոք, որոշ քաղաքական կուսակցություններ չեն մասնակցում այս գործընթացին: Մենք հավատարիմ ենք մնում Ասոցացման համաձայնագրի լիարժեք իրականացմանը, որը նախանշում է հավակնոտ նպատակներ,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

- Վրաստանը մեր ամենամոտ գործընկերներից է: Սա հատուկ հանդիպում է, քանի որ Եվրամիության ղեկավարների կողմից Վրաստանի Եվրամիության հեռանկարի ճանաչումից հետո, նման բարձր մակարդակի հանդիպում անցկացվում է առաջին անգամ, եւ դա իսկապես հաստատում է, որ Եվրամիությունը պարտավոր է է՛լ ավելի ամրապնդել մեր հարաբերություններն ու կատարել Վրաստանի պահանջները: Սակայն այս հավակնությունները, ինչպես միշտ, բխում են պատասխանատվությունից: Այս պատասխանատվությունը, առաջին հերթին, բարեփոխումների շարունակությունն է, հատկապես այն 12 առաջնահերթությունների վերաբերյալ, որոնք սահմանվել են Եվրոպական հանձնաժողովի կողմից: Երկրորդ պատասխանատվությունը գալիս է քաղաքական սպեկտրում բեւեռացվածության թուլացումից եւ բոլորի ընդհանուր ջանքերով պայմանավորված նպատակի իրականացմանը, ոչ միայն կառավարության, այլ ողջ քաղաքական սպեկտրի ու ողջ հասարակության,- իր հերթին հայտարարեց Եվրամիության արտաքին քաղաքականության ու անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ջոզեֆ Բորելը:

Ինչպես նշվեց մամլո ասուլիսում, խորհրդի նիստում մանրամասն քննարկվեցին Եվրամիությանն անդամակցության ուղղությամբ Վրաստանի կողմից իրականացված միջոցառումները, դրական գնահատական տրվեց տարբեր ոլորտներում անցկացվող բարեփոխումներին, ընդգծվեց Եվրահանձնաժողովի կողմից ներկայացված 12 առաջնահերթությունների կատարման անհրաժեշտությունը:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

ԼԻԶ ԹՐԱՍԸ՝ ԹՎՈՎ ԵՐՐՈՐԴ ԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Սեպտեմբերի 5-ին «Պահպանողական կուսակցության» համագումարում Լիզ Թրասն ընտրվել է Մեծ Բրիտանիայի նոր վարչապետ: Ընտրությունից հետո, Լիզ Թրասը Շոտլանդիայում հանդիպում է ունեցել թագուհի Եղիսաբեթ II-ի հետ, որը նրան հանձնարարեց ձեւավորել նոր կառավարություն:

Պահպանողական կուսակցության առաջնորդի եւ հետեւաբար Մեծ Բրիտանիայի վարչապետի պաշտոնի համար արտաքին գործերի նախարար Լիզ Թրասի հետ միասին պայքարում էր նաեւ գանձապետարանի նախկին կանցլեր Ռիշի Սունակը:

Լիզ Թրասը դարձավ բրիտանական պատմության մեջ երրորդ կին վարչապետը՝ Մարգարեթ Թեթչերից եւ Թերեզա Մեյից հետո:

ՄԱՀԱՑԵԼ Է ԵՂԻՍԱԲԵԹ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳՈՒՀԻՆ

Սեպտեմբերի 9-ին, 96 տարեկան հասակում, մահացել է Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարող թագուհի Եղիսաբեթ II-ը:

Եղիսաբեթ II թագուհին ծնվել է 1926 թվականի փետրվարի 6-ին Յորքի դուքս Ջորջի եւ նրա կնոջ՝ Էլիզաբեթի ընտանիքում: Նրա հայրը գահ էր բարձրացել 1937 թվականին:

Էլիզաբեթն ամուսնացել է արքայազն Ֆիլիպի հետ, որից ունի չորս երեխա՝ Չարլզը, Էննը, Էնդրյուն եւ Էդվարդը:

Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության թագուհին գահ է բարձրացել 1952 թվականին, 2015 թվականին նա դարձել է Մեծ Բրիտանիայի եւ Անգլիայի պատմության մեջ ամենաերկար կառավարող միապետը: Եղիսաբեթ II-ի օրոք փոխվեցին 14 վարչապետեր (առաջինը Ուինսթոն Չերչիլն էր), բրիտանական բազմաթիվ նախկին գաղութներ անկախություն ձեռք բերեցին: Համագործակցության մի շարք երկրներ դարձան հանրապետություններ: Դրանցից վերջինը՝ Բարբադոսը՝ անցյալ տարի:

ԱՐՔԱՅԱԶՆ ԿԱՐԼ III-Ը ԴԱՐՁԱՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Լիզ Թրասը հայտարարել է, որ Բրիտանիայի նոր թագավոր դարձավ Կարլ III -ը: Նրա թագադրման արարողությունը, ինչպես հաղորդում են համաշխարհային լրատվական գործակալությունները, տեղի կունենա հնարավորինս շուտ:

Ժառանգը գահ է բարձրանում միապետի մահից անմիջապես հետո: Թագավորը պաշտոնապես գահ կբարձրանա 24 ժամվա ընթացքում, իրավահաջորդության խորհրդի նիստի ժամանակ:

Իր հայտարարության մեջ Նորին Մեծություն Թագավորն ասել է. «Իմ սիրելի մոր՝ Նորին Մեծություն Թագուհու մահը մեծ տխրության պահ է իմ ընտանիքի բոլոր անդամների համար»:

ՀԱՆՐԱՅԻՆ TV

«ԲԱԶՄԵՐԱՆԳ ՎՐԱՍՏԱՆ» ՆԱԽԱԳԻԾԸ ՆՊԱՍՏԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

Սեպտեմբերի 7-ին Վրաստանի խորհրդարանում Հանրային հեռարձակողի հոգաբարձուների խորհրդի նախագահ Վասիլ Մաղլափերիձեն պատգամավորներին ներկայացրեց Առաջին ալիքի աշխատանքային հաշվետվությունը՝ ասելով, որ հատուկ ստեղծագործական ռեսուրսներ են ծախսվում էթնիկ փոքրամասնություններին իրազեկելու համար:

Ըստ Վասիլ Մաղլափերիձեի, հատկանշական է «Բազմերանգ Վրաստան» նախագիծը, որի նպատակն է ազգային փոքրամասնություններին տեղեկություն տրամադրել մատչելի լեզվով նպաստել է ինտեգրման գործընթացին:

- Նախորդ տարի ազգային փոքրամասնությունների լեզուներով գրավոր տեղեկության ընդհանուր թիվը կազմել է 36 091, իսկ հայերեն, ադրբեջաներեն եւ քրդերեն թարգմանված եւ օրիգինալ տեսաարտադրանքները՝ 26 913: Էթնիկ փոքրամասնությունների մասին վրաց լեզվով թեմաների ընդհանուր թիվը 767 է: Հանրային հեռարձակողի 1tv.ge վեբ հարթակը գործում է յոթ լեզվով: Երկրում եւ արտերկրում տեղի ունեցող նորությունները զուգահեռ ռեժիմով թարգմանվում են աբխազերեն, օսերեն, ադրբեջաներեն, հայերեն, ռուսերեն եւ անգլերեն:

Օրվա գլխավոր լրատվական հաղորդումը ժամը 21:00-ին թարգմանվում է համաժամանակյա թարգմանությամբ հայերեն եւ ադրբեջաներեն: Բացի այդ ադրբեջաներեն եւ հայերեն պատրաստվում են ժամանցային, մշակութային, կրթական եւ մանկական հաղորդումներ: 2021 թվականից Հանրային հեռարձակողը նորություններ է պատրաստում նաեւ քրդերենով. 2021 թվականին Հեռուստադպրոցի եթերում հեռարձակվել են վրացերենի հեռուստադասեր ոչ վրացալեզու դպրոցների համար,- ասաց Վասիլ Մաղլափերիձեն:

ՌՈՒՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 198-ՐԴ ՕՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՎԼԱԴԻՄԻՐ ԶԵԼԵՆՍԿՈՒՑ

Վրաստանում Ուկրաինայի գործերի ժամանակավոր ներկայացուցիչ Անդրեյ Կասյանովը Թբիլիսիում «Փառք Ուկրաինային» միջազգային համաժողովում ընթերցել է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու նամակը:

Ինչպես նշում է Զելենսկին նամակում, նա իր երախտագիտությունն է հայտնում Վրաստանին եւ անձամբ շնորհակալություն՝ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլուն «Ղրիմի պլատֆորմի» երկրորդ գագաթաժողովին մասնակցելու համար:

Զելենսկին նշում է, որ այս գագաթաժողովը ցույց տվեց համաշխարհային ժողովրդավարությունների միասնությունն ու ուժը՝ Ուկրաինան եւ միջազգային կարգը ռուսական ագրեսիայից պաշտպանելու գործում:

«Ես շատ երախտապարտ եմ ձեր երկրի՝ Ուկրաինային ցուցաբերած անսասան աջակցության համար, որն անգնահատելի է մեզ համար, քանի որ այն մեզ ավելի է մոտեցնում հաղթանակին: Վստահ եմ, որ համատեղ ջանքերով մենք կհաղթենք ագրեսորին»,- ասված է Վլադիմիր Զելենսկու նամակում:

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԸ ՎԵՐՋԻՆ ԵՐԵՔ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ 50 ԿՄ ԱՌԱՋ է ՇԱՐԺՎԵԼ

Ուկրաինայի գլխավոր շտաբի տվյալներով, ուկրաինացի զինվորականները Խարկովի մարզում երեք օրվա ընթացքում առաջ են շարժվել 50 կմ:

Հայտարարության մեջ նշվում է, որ վերջին 24 ժամում Ռուսաստանի Դաշնությունը 45 օդային եւ հինգ հրթիռային հարված է հասցրել Ուկրաինայի տարածքին:

Սեւերսկի ուղղությամբ ռուսական բանակի կողմից կրակի ինտենսիվությունը զգալի նվազել է, իսկ մյուս ուղղություններով ռուսական բանակը շարունակել է կրակել ռազմական եւ քաղաքացիական օբյեկտների ուղղությամբ:

Գլխավոր շտաբի տվյալներով, ուկրաինացի զինվորականներն ուժեղացնում են դիրքերը եւ ապահովում, որ հակառակորդը առաջխաղացում չունենա:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՄՓՈՓՎԵՑ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նախարարը խոսեց քաղաքացիական հավասարության եւ ինտեգրացիոն քաղաքականության տեսլականի, նպատակների ու խնդիրների մասին: Նա ընդգծեց նշված քաղաքականության շրջանակներում ձեռք բերված արդյունքները, դեռ առկա մարտահրավերները եւ խոսեց ապագա ծրագրերի մասին:

Հանդիպմանը ծավալվեց քննարկում, որտեղ մասնակիցները հայտնեցին իրենց կարծիքները իրականացվող աշխատանքների եւ առկա մարտահրավերների վերաբերյալ:

Միջոցառումն անցկացվեց ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Քաղաքացիական եւ տնտեսական ինտեգրման ծրագրի» աջակցությամբ, որն իրականացվում է Միավորված ազգերի կազմակերպության Վրաստանի ասոցիացիայի (UNAG) կողմից:

ԴԻՐՔՈՈՇՈՒՄ

ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Փոխանակ ապաբեւեռացման քայլ անեն, ընդհակառակը, քայլ արեցին դեպի բեւեռացումն ու արմատականացումը խորացնելու: Նիկա Մելիայի հայտարարության ո՞ր նախադասությունն ու պարբերությունն են վերաբերում ապաբեւեռացմանը: Սա ուղղակի արմատականացմանն ուղղված գործողություն է: Երբ մենք խոսում ենք ապաբեւեռացման մասին, իրականում Վրաստանում մենք ունենք ոչ թե բեւեռացում, այլ ընդդիմության արմատականացում, ինչը բեւեռացում է առաջացնում: Հիմնական խնդիրը ոչ թե բեւեռացումն է, այլ ընդդիմության արմատականացումն ու նրանց հետեւած արմատական օրակարգը, եւ դա իշխանության չճանաչումն է,- նշեց Շալվա Պապուաշվիլին ու հավելեց, որ ինչ վերաբերում է ընտրություններին, ապա խորհրդարանական ընտրությունները տեղի կունենան 2024 թվականին:

«Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ **Իրակլի Կոբախիձեն** գտնում է, որ արտահերթ ընտրությունների հետ կապված ցանկացած խնդրանք բացարձակապես անտեղի է, ցանկացած գործողություն բացարձակապես դատապարտված է ձախողման:

«Ազգային շարժում»-ում հավատարիմ են մնում սեփական օրակարգին, անընդհատ խոսում են ցույցերի, արտահերթ ընտրությունների մասին, թեեւ իրենց տոնայնությունից թվում է, որ իրենք էլ չեն հավատում իրենց առաջադրած պահանջներին: Եթե չեմ սխալվում՝ օգտագործվեցին այսպիսի բառեր՝ «ծանր քաղաքական ճգնաժամ»: Միակ տեղը, որտեղ քաղաքական ճգնաժամն ամենածանրն է, արմատական ընդդիմությունում է: Ներսում նրանք ունեն ամենավատ քաղաքական ճգնաժամը, որը կարծես թե անհաղթահարելի է: Ներքին հակասություններն են, ընդհանուր թուլությունն է, որ ցույց են տալիս: Նրանք մի քանի փորձեր են արել երկրում իրավիճակը բարդացնելու: Այս բոլոր ջանքերը ձախողվել են, եւ դա նույնպես հանգեցնում է իրենց կուսակցության շարքերում հիասթափության,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Ըստ Թբիլիսիի քաղաքապետ **Կախա Կալաձեի**, արտահերթ ընտրությունների մասին խոսելն աբսուրդ է:

- Երկիրը վերակառուցման, զարգացման, տնտեսական առաջընթացի մեջ է, ինչ վերաբերում է արտահերթ ընտրություններին, սա մեծ աբսուրդ է եւ մեծ հիմարություն, ընտրությունները տեղի են ունենալու 2024 թվականին, ինչպես դա նախատեսված է սահմանադրությամբ: Ընդդիմությունը քաղաքական ճգնաժամ ունի,- հայտարարեց Կախա Կալաձեն:

Նշենք, որ Վրաստանի ամենաազդեցիկ համարվող ընդդիմադիր «Միասնական ազգային շարժում» նախագահ Նիկա Մելիան «երկրում տիրող վատթարագույն ճգնաժամը մեղմելու համար հանդես եկավ արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման պահանջով:

Նրա խոսքով, ընդդիմության բոլոր քայլերն ու գործողություններն ուղղված են լինելու այս նպատակին հասնելուն: Մելիան ներկայացրեց նաեւ կուսակցության ռազմավարական ծրագիրը, որը ներառում է տարբեր ուղղություններով ակտիվ գործողությունների իրականացում:

Մելիայի կարծիքով, քաղաքական ճգնաժամը պետք է օգտագործել որպես հնարավորություն արտահերթ ընտրություններ նշանակելու եւ դրանով իսկ «նոր իրականություն ստեղծելու համար»:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՍՏԱՑԵԼ ՄԻԱՅՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

Վրաստանի Արդարադատության նախարարության պետական ծառայությունների զարգացման գործակալությունը պարզաբանում է տալիս Վրաստանի քաղաքացիություն ստանալ ցանկացողների դիմումների ընթացքի վերաբերյալ:

«Որպեսզի նախագահը բացառիկ կարգով Վրաստանի քաղաքացիություն շնորհի, անհրաժեշտ է, որ անձը ծագումով Վրաստանից լինի եւ համապատասխանի օրենքով նախատեսված այլ պահանջներին: Մասնավորապես, քաղաքացիություն ստանալու համար դիմողը պետք է լինի Վրաստանի օկուպացված տարածքում բնակվող կամ այս տարածքից բռնի տեղահանված, ինչպես նաեւ քաղաքական կարծիքի կամ սոցիալ-տնտեսական իրավիճակի պատճառով տարբեր ժամանակներում արտագաղթած անձ, ով ներկայումս այլ երկրի քաղաքացի է եւ ցանկանում է վերականգնել կապերն իր հայրենիքի հետ:

2022 թվականին Ռուսաստանի 3 265 քաղաքացու դիմում է ներկայացվել գործակալություն՝ բացառիկ հիմունքներով քաղաքացիություն շնորհելու համար: Դրանցից Վրաստանի նախագահը Վրաստանի քաղաքացիություն է շնորհել միայն 728 մարդու, ովքեր ծագումով Վրաստանից են եւ համապատասխանում են օրենքով սահմանված պահանջներին՝ կապված Վրաստանի պետական լեզվի իմացության մակարդակի, Վրաստանի պատմության եւ Վրաստանի հիմնական օրենքի վրա»,- նշված է Պետական ծառայությունների զարգացման գործակալության տեղեկատվության մեջ:

ՍԿՍՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Սեպտեմբերի 6-ին սկսվեց Վրաստանի խորհրդարանի աշնանային նստաշրջանը:

Նստաշրջանի ընթացքում կարեւորագույն օրենսդրական նախաձեռնություններից է Եվրամիության 12 հանձնարարականների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, ինչի միջոցով Վրաստանի կառավարությունը փորձում է ստանալ ԵՄ թեկնածու երկրի կարգավիճակ՝ Ուկրաինայի եւ Մոլդովայի նման:

Միաժամանակ, Վրաստանի խորհրդարանը պետք է մի շարք կադրային որոշումներ կայացնի, դրանց թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի ու անդամների եւ նոր հանրային պաշտպանի ընտրությունները:

Խորհրդարանական ընդդիմությունը հայտարարեց, որ մտադիր է օգտագործել նիստը՝ կառավարությանն ստիպելու, որ կատարի ԵՄ բոլոր 12 հանձնարարականները:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ՝ ԶԲՈՍԱՇՐՋԱՆԻՑ

Ազգային բանկի հրապարակած տեղեկատվության համաձայն, հուլիսին Վրաստանը միջազգային այցելուներից ստացել է 476,1 մլն դոլար եկամուտ: Ընդհանուր հաշվով, այս տարվա 7 ամսում երկիրը զբոսաշրջությունից ավելի քան 1,6 մլրդ դոլարի եկամուտ է ստացել:

Հուլիսին ստացված եկամուտը գրեթե 271 մլն դոլարով գերազանցում է նախորդ տարվա հուլիսի ցուցանիշը:

Նշենք, որ նախորդ ամիս ստացված եկամուտը գերազանցում էր նաեւ նախահամաճարակային շրջանի տվյալները: 2019 թվականի հուլիսին երկիրը զբոսաշրջությունից ստացել է 395,4 մլն դոլար՝ 80,7 մլն դոլարով պակաս:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(9 սեպտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.8543
1 ԵՎՐՈ	2.8572
100 ՌՈՒԲԼԻ	4.6907
1000 ԴՐԱՄ	7.0634

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

COVID - 19. 12 787 ՎԱՐԱԿՄԱՆ ԵՎ 8 ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ՝ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Անցած շաբաթվա ընթացքում Վրաստանում գրանցվել է կորոնավիրուսով վարակման 12 787 նոր դեպք: Առողջացել է 14 257 բուժառու, մահացել՝ 8-ը: Այս մասին տեղեկությունը տարածել է Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը:

Մեկ շաբաթվա ընթացքում Վրաստանում 73 հազար 436 թեստավորում է կատարվել: 7-օրյա թեստավորման դրական ցուցանիշը կազմում է 17,41 տոկոս:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԹԱՆԿԱՑԵԼ Է ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊՈԼԻՍԸ

Վրաստանի առողջապահության ապահովագրության կարգավորման ծառայության տեղեկությամբ, Վրաստանի բնակչության 18 տոկոսը կամ 668 հազար քաղաքացի ունի մասնավոր ապահովագրության փաթեթ: Ապահովագրվածների թիվն ավելացել է 32 հազարով:

Ապահովագրվածների թվի ավելացման հետ միասին, աճել է նաեւ ապահովագրական հատվածում ստացված հավելավճարների չափը: Առաջին կիսամյակում քաղաքացիները բժշկական ապահովագրության համար վճարել են 231 մլն լարի, ինչը 36,4 մլն լարիով ավելի է նախորդ տարվա համեմատ:

Աճել է նաեւ ապահովագրական միջին պոլիսի (վկայագիր) արժեքը. եթե անցյալ տարի միջին վճարը կազմում էր 51 լարի, ապա այս տարի հասել է 58 լարիի:

ԳՈՐԾԱԴԻՐ

«ԳԼՈԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՖՈՆԻ ՎՐԱ ՄԵՆՔ ՊԱՀՊԱՆԵԼ ԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՁՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մեր քաղաքացիներին ուզում եմ տեղեկացնել նաեւ, որ դրամական փոխանցումներն աճել են 46,8 տոկոսով եւ գերազանցել 300 մլն դոլարը: Ինչ վերաբերում է բիզնես ոլորտին, ապա մեր քաղաքացիներին ասեմ, որ բիզնեսի շրջանառությունը զգալիորեն աճել է, ինչպես նաեւ զբաղվածների թիվն աճել է ինչպես առաջին եռամսյակում, այնպես էլ՝ երկրորդ եռամսյակում՝ հունիսին: Որոնք, իհարկե, շատ ողջունելի տվյալներ են,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին ու հավելեց, որ շջանառությունն աճել է նաեւ բիզնես ոլորտում:

- Զբաղվածների թիվն աճել է ինչպես առաջին, այնպես էլ՝ երկրորդ եռամսյակներում: Գործարար հատվածի շրջանառությունը հունվար-հունիս ամիսներին աճել է 25 տոկոսով, ինչը ողջունելի է,- հայտարարեց վարչապետը:

ԿՀԱՍՏԱՏՎԻ ԵՐԿՐԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ...

Կառավարության նիստում Իրակլի Ղարիբաշվիլին անդրադարձավ երկրի երկարաժամկետ զարգացման «Տեսլական 2030» եւ 2022-2030 թվականների մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության թեմային ու հայտարարեց, որ դրանց մշակումը ուղղված է հզոր ժողովրդավարական պետության կառուցմանը:

- Այս փաստաթուղթը հիմնված է ամուր դեմոկրատական մեր ժողովրդի՝ պետություն կառուցելու ընդհանուր ձգտման վրա: Սա մի երկիր է, որը ներառում է կայուն եւ ներառական տնտեսական զարգացում: Սա մեր ընդհանուր խնդիրն է՝ սոցիալական հավասարությունը, որակյալ առողջապահությունը, կրթությունը, էկոլոգիապես մաքուր եւ առողջ միջավայրը, ժողովրդավարության, անվտանգության եւ կայունության ամրապնդումը: Այս ամենը ձեւակերպված է այս փաստաթղթում,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

...ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Խոսելով մարդու իրավունքների պաշտպանության հարցում առկա հիմնախնդիրների մասին՝ վարչապետը հայտարարեց, որ գործադիրը կհաստատի «Մարդու իրավունքների պաշտպանության 2022-2030 թվականների ազգային ռազմավարությունը», փաստաթուղթը, որը քննարկվել է բոլոր դերակատարների հետ՝ թե' միջազգային հանրության, թե' հասարակական կազմակերպությունների հետ: Վարչապետի խոսքով, փաստաթուղթը կուղարկվի Վրաստանի խորհրդարան՝ հաստատման: Կառավարության ղեկավարը հիշեցրեց, որ մարդու իրավունքների պաշտպանության 2014-2020 թվականների ազգային ռազմավարությունը, որի վրա աշխատել է հանրահայտ փորձագետ Թոմաս Համերբերգը, «Վրացական երազանք» իշխանության կողմից առաջին անգամ հաստատվել է 2014 թվականին:

- Ուզում եմ տեղեկացնել մեր քաղաքացիներին, որ այսօր կառավարության նիստում մենք կհաստատենք Մարդու իրավունքների պաշտպանության 2022-2030 թթ. ազգային ռազմավարությունը: Ուզում եմ հանրությանը հիշեցնել, որ մենք քաջատեղյակ ենք, թե ընդհանրապես որքան մարտահրավերներ կային այս ոլորտում՝ մարդու իրավունքների ոլորտում: Մենք շատ լավ հիշում ենք, որ նախորդ իշխանությունների օրոք ժողովրդավարության նշան չկար, եւ մարդու իրավունքները ոտքի տակ էին բոլոր ուղղություններով: Իհարկե, դրանից հետո մենք արմատապես փոխել ենք իրավիճակը երկրում մարդու իրավունքների պաշտպանության առումով: Մենք հիմա նոր փաստաթուղթ ենք պատրաստել, այն քննարկվել է բոլոր դերակատարների, միջազգային հանրության, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների հետ, եւ ուզում եմ ձեզ ասել, որ այսօր մենք ամբողջական ձեւով ներկայացնում ենք նշված ռազմավարությունը, որը կառավարությունն այսօր կհաստատի եւ կուղարկի խորհրդարանի հաստատմանը,- ասաց վարչապետը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՆ ՆՇԵՑ ՔԱՂԱՔԻ ՕՐԸ՝ «ԱԽԱԼՔԱԼԱՔՈԲԱՆ»

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՆ ՆՇԵՑ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 958-ԱՄՅԱԿԸ

Տոնի առիթով բնակիչներին շնորհավորեց Ախալքալաքիի քաղաքապետ Մելքոն Մակարյանը: Տոնական միջոցառմանը մասնակցեցին Սամխե-Ջավախեթիի տարածաշրջանի փոխնահանգապետ Շոթա Ռոստիաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Անտոն Օբոլաշվիլին, Սամվել Մանուկյանը, Սմբատ Կյուրեղյանը, Ախալցիխեի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Խազարաշվիլին, փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը, սակրեբուլոյի նախագահ Դավիթ Լոմիձեն, փոխնախագահ Համբարձում Բաբոյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանը: Ներկաների թվում էին նաեւ Ասպինձայի, Բորժոմիի, Ադեգենիի մունիցիպալիտետների քաղաքապետարանների ու սակրեբուլոների ղեկավարները:

«Ախալքալաքոբա 2022» տոնի կապակցությամբ քաղաքի կենտրոնական զբոսայգում անցկացվեցին տարբեր միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, անիմացիոն կերպարների ցուցադրություն, երեխաների համար ժամանցային ծրագրեր, սպորտային մրցույթներ, համերգ՝ տեղական պարային համույթների մասնակցությամբ: Անցկացվեց ձեռագործ աշխատանքների ցուցահանդես-վաճառք, բռնցքամարտի եւ կիկբոքսինգի մարզաձեւերի Եվրոպայի չեմպիոններին ու մրցանակակիրներին տվեցին դրամական պարգեւներով:

«Ախալքալաքոբա 2022» միջոցառումն ավարտվեց համերգով եւ մեծ հրավառությամբ:

ՀՈՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՐՑՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՌՆԵՈՒԼԻՈՒՄ

Սեպտեմբերի 6-ին Մառնեուլիի քաղաքապետարանի աջակցությամբ, Վրաստանի արդարադատության նախարարության հանրային ռեգիստրի ազգային գործակալությունը Մառնեուլիում հողերի գրանցման համակարգային բարեփոխման հարցերի շուրջ խորհրդատվական հանդիպում անցկացրեց քաղաքացիների համար:

Հանդիպմանը ներկա էր Մառնեուլիի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Թեմուր Շուբիթիձեն:

Ինչպես նշեցին քաղաքապետարանում, քաղաքացիներին իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել Վրաստանի արդարադատության նախարարության հանրային ռեգիստրի ազգային գործակալության ներկայացուցիչները, իսկ շահագրգիռ անձանց տրամադրվել է վեբ պորտալում՝ SLR.napr.gov.ge գրանցման հնարավորություն: Մասնավորապես, բարեփոխման շրջանակներում քաղաքացիներն անվճար կստանան հողամասերի կադաստրային հատակագծման/չափագրման աշխատանքների, իրավունքը հաստատող փաստաթղթերի որոնման եւ համակարգման, գործարքի կողմերի ստորագրությունների ստուգման, իրավունքը հաստատող փաստաթղթով նույնականացման, հողամասի սեփականության գրանցման ու դրա հետ կապված փոփոխությունների սպասակումները:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ, ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ԵՎ ԱԽԱԼՑԻԽԵԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԸ HEKS-EPER GEORGIA ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԵՐ

Սեպտեմբերի 6-7-ը Ախալքալաքիի, Նինոծմինդայի եւ Ախալցիխեի քաղաքապետարանների եւ HEKS-EPER Georgia կազմակերպության միջեւ ստորագրվեցին համագործակցության հուշագրեր:

Ախալքալաքի

Ախալքալաքիում հուշագիրը ստորագրեցին Ախալքալաքիի քաղաքապետ Մելքոն Մակարյանն ու Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող «Քաղաքացիական հասարակության հզորացում սոցիալական, տնտեսական եւ քաղաքական կյանքում հավասար ու լիարժեք մասնակցության համար» ծրագրի մենեջեր Գիորգի Թվալիշվիլին:

Նինոծմինդայում «Քաղաքացիական հասարակության հզորացում հասարակական, տնտեսական եւ քաղաքական կյանքին հավասար ու ամբողջական մասնակցության համար նախագծի շրջանակներում փոխհամագործակցության հուշագիրը ստորագրեցին՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանն ու նախագծի մենեջեր Գիորգի Թվալիաշվիլին:

Նինոծմինդա

Սեպտեմբերի 7-ին Ախալցիխեում կայացած միջոցառմանը HEKS-EPER Georgia-ի եւ Ախալցիխեի քաղաքապետարանի համագործակցության հուշագիրը ստորագեցին Ախալցիխեի քաղաքապետ Իրակլի Խազարաշվիլին եւ HEKS-EPER Georgia կազմակերպության գործադիր տնօրեն Բեքա Ուրուշաձեն:

Ախալցիխե

Համաձայն հուշագրի, քաղաքապետարանը պարտավորվում է աջակցել նախագծով նախատեսված աշխատանքների անխափան իրականացմանը, ինչպիսիք են տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր ներկայացուցիչների մասնակցությունը կրթական/տեղեկատվական գործունեությանը, քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը մասնակցային եւ գենդերային զգայուն բյուջեի պլանավորման ու որոշումների կայացման գործընթացներում՝ անդրադառնալով գենդերային բյուջետավորման եւ քաղաքականության գնահատման քարոզարշավների պահանջներին: Իսկ HEKS-EPER Georgia-ն պարտավորվում է՝ հասարակությանը տեղեկատվություն տրամադրել ծրագրի շրջանակներում նախատեսված եւ իրականացվող գործողությունների մասին, աջակցել հասարակական կազմակերպություններին ու ծրագրի թիրախային խմբերի ներկայացուցիչներին ներգրավել միջոցառումներում:

Հուշագրով կողմերը պարտավորվում են համատեղ ջանքերով ամրապնդել քաղաքացիական հասարակությունը եւ խթանել քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունը որոշումների կայացման ու իրականացման գործընթացներում:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ